կացրեց, որ Հայաստանի ազգային հավաքականն օրեր առաջ է վերադարձել Արգենտինայից՝ չորրորդ անգամ անընդմեջ շահելով աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Այս հաղթանակի արդյունքում 2009 թ. աշխարհի գավաթի մրցումներն անցկացվելու են Հայաստանում: Հավաքականի ձեռքբերումներին և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ հանդիպման կարևորությանն անդրադարձավ նաև պրն Միքայելյանը՝ պատմելով, թե ինչպիսի ջերմ ընդունելության են արժանացրել ազգային հավաքականին Արգենտինայի հայ համայնքն ու հայոց թեմը:

Վերջում հաղթանակի առիթով Հայրապետական իր շնորհավորանքներն ու օրհնությունը մարզիկներին բերեց Նորին Սրբությունը: «*Հաղթանակները մեր ազգային կյանքում երբեք պատահական չեն: Դա արիության ոգին, հաղթական կամքն է, որ մեր ժողովուրդը դրսևորել է իր պատմության ընթացքին: Այդ հաղթական ոգին այսօր վերակենդանացել է Ձեր մեջ և առաջնորդել նման մեծ հաղթանակի*»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ մաղթելով երիտասարդներին նորանոր հաջողություններ իրենց մարզարվեստում:

Նորին Սրբությունը նաև իր գնահատանքը հայտնեց Պարգև Սրբազանին՝ խմբի նկատմամբ մշտապես ցուցաբերվող իր հովանավորության և ուշադրության համար:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՆԻՑՑԱՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ

Սեպտեմբերի 22-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Նիցցայի քաղաքապետ, սենատոր Ժակ Պեյրային և իր տիկնոջը՝ ուղեկցությամբ Նիցցայի հայ համայնքի ներկայացուցիչների և Նիցցայի հոգևոր հովիվ Տ. Վաչե քահանա Հայրապետյանի:

Ողջունելով քաղաքապետի անդրանիկ այցը Մայր Աթոռ՝ Վեհափառ Հայրապետը վերհիշեց իր հանդիպումը պրն Պեյրայի հետ Նիցցայում Ֆրանսիա կատարած Հովվապետական իր առաջին այցելության ժամանակ, 2000 թ.: «*Ուրախ ենք, որ մեր ժողովրդի զավակները Ցեղասպանությունից հետո կարողացել են իրենց ազգային-եկեղեցական կյանքը կազմակերպել հյուրընկալ Ֆրանսիայում և դարձել են նաև արժանավոր քաղաքացիները ձեր երկրի*»,- ասաց Նորին Սրբությունը՝ ի դեմս քաղաքապետի շնորհակալություն հայտնելով Ֆրանսիայի իշխանություններին ու ժողովրդին՝ հանդեպ հայ ժողովուրդը մշտապես ցուցաբերվող հարգանքի և սիրո համար:

Իր հերթին Նիցցայի քաղաքապետն իր ուրախությունը հայտնեց այցի առիթով և Հայոց Հայրապետին ներկայացրեց Հայաստան կատարած իր առաջին այցի տպավորությունները: «Հայաստանը մեր սրտում է»,- ասաց պրն Պեյրան: Խոսելով Նիցցայի հայ համայնքի մասին՝ նա այն բնութագրեց որպես աշխատասեր, հավատարիմ և օրինապահ:

Հանդիպման ընթացքում անդրադարձ եղավ նաև խորհրդային տարիներին Եկեղեցու առջև ծառացած դժվարություններին, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ներկայիս գործունեությանը և հոգևոր կյանքի վերազարթոնքին: Խոսվեց 21-րդ դարում Եկեղեցու առաքելության մասին: